

Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

Aravot Daily

օրաթերթ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

6/4102/ 17 հունվարի 2012 երեքշաբթի

ISSN 1829-2224
1 1 2 5 5
9 771829 222003

Արեւիկայի գաղափարը

ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինը իր նախընտրական կայքում հանդես է եկել հողվածով, որում գրեթե ուղիղ տեքստով մեղադրում է Արեւմուտքին ժողովրդավարությունը ներմուծելու մեջ: Ստացվում է, որ նրանք, ովքեր Ռուսաստանում լուսահանգում են բարեփոխումներ եւ, մասնավորապես, արդար ընտրություններ, «առաջադրանքներ» ունեն են, եւ օբյեկտիվորեն նրանց դաշնակիցներն են այն ղեկավարները, որոնք ժողովրդավարություն են ներմուծում ուժային, ուժանակալ մեթոդներով: Բացի այդ, նշում է Պուտինը, ժողովրդավարական սղասումներն էլ չեն արդարանում, եւ այդ գործընթացների բացասական հետեւանքներն ավելի շատ են: Այսինքն՝ թողեք, որ ես եւս 12 տարի իշխեմ, եթե չեք ուզում, որ Ռուսաստանն ընկնի Լիբիայի կամ Եգիպտոսի օրը: Եթե չեմ տեսնում, որ իրենք իրենք ժողովրդավարություն հաստատելու Ռուսաստանում ուժանակալ մեթոդներով՝ դա կերի համաշխարհային դատարանին: Երկրորդ՝ հետխորհրդային երկրներում Արեւմուտքը երբեք չի ցուցաբերի նման ակտիվություն, եթե չտեսնի, որ հասարակության մեծ մասը հասունացել է փոփոխությունների համար: Կիրակի օրը, օրինակ, Ղազախստանում տեղի են ունեցել խորհրդարանական ընտրություններ, որոնց արդյունքում իշխող կուսակցությունը, ղաշտոնական արդյունքներով, ստացել է ընտրողների թվի 80 տոկոսը: ԵԱԿԿ դիտորդները հայտարարեցին, որ ընտրությունները ժողովրդավարական չէին: Այդ հայտարարություններին այնպիսի քննադատություններ Ղազախստանի «ներքին գործերի» չեն խառնվի: Որովհետեւ Ղազախստանում չկան ազդեցիկ ուժեր, որոնք ոչ թե խոսքով, այլ գործով են հակադրվում Ղազախստանի ավտորիտար ռեժիմին եւ ժողովրդին առաջարկում հստակ, ընկալելի այլընտրանք: Վրաստանում Սակաշվիլին այդպիսի այլընտրանք առաջարկեց. «Մենք ղեկավար ենք դուրս գանք Ռուսաստանի ազդեցության ոլորտից, միտի ձգտենք դառնալ ՆԱՏՕ-ի եւ ԵՄ-ի անդամ, իսկ դրա համար ղեկավար է գալիս իրեն կրճատենք կոռուպցիան եւ նորմալ դաշնակցություն ստեղծենք մասնավոր բիզնեսի համար»: Երկրորդ է դա, թե սխալ, բայց այդ երկրի բնակիչների մեծամասնությունն ընկալեց այդ գաղափարը, հավաստաց դրան, եւ դրանից հետո միայն Արեւմուտքը աջակցություն հայտնեց «ճարտարագույն հեղափոխությանը»: Ռուսաստանում նման գաղափար այժմ չկա. լեզու-տիմությունն ու ժողովրդավարացումը չեն կարող ուղիղ կանգնեցնել ուսու ժողովրդին: Ընդդիմադիր շարժումն այնտեղ զարգանալու շանքեր ունի, ին կարծիքով, միայն մի դրամանով՝ եթե հասարակությանն առաջարկի խիստ ազգայնական գաղափարներ: Բայց այդ դեպքում վստահ չեմ, որ Արեւմուտքն այդ շարժմանը կաջակցի: Խիստ կասկածում եմ նաեւ, որ ՌԴ-ում ծայրահեղ ազգայնական իշխանությունը մեզ՝ հայերիս համար ավելի ձեռնտու է, քան Պուտինի ավտորիտարիզմը:

ՌԴ վարչապետի հողվածում կա մի դիտարկում, որը բավականին դիտարկ է: Խոսքն այն մասին է, որ «տա-դարյունները», հեղափոխականները շատ արագ վերածվում են ինքնավստահ տարրերի, եւ հակառակը՝ վերջիններս հաճախ դարձյալ վերածվում են հեղափոխականների: Այդ գործընթացները տեղի են ունենում բոլորիս աչքի առաջ. փողոցային «գավորները»՝ տեղավորվելով փափուկ աթոռներում, դառնում են կայունության կողմնակից մեծ ու փոքր իշխանիկներ, եւ հակառակը՝ նրանք, ովքեր նախկինում ամեն ինչի տերու-տիրակալն էին, կորցնելով իրենց աթոռները, կրկին դառնում են փողոցներում արդարություն որոնող «գավորներ»:

ԱՐԱՍ ԱԲՐԱՅԱՅԱՆ

Որոշել են կասեցնել ՄԻԵԴ-ում իրենց գործերի բնույթումը



Aravot.am-ի տեղեկություններով՝ 2008թ. «Մարտի 1»-ի գործով ավելի քան մեկ տասնյակ նախկին քաղաքատարկայներ, որոնց գործերով հիմնական գանգատներն արդեն ուղարկվել են Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ հիմա իրենց փաստաբանների հետ բնարկում են այդ գործերը եւ ստանալու՝ ՄԻԵԴ-ում դրանց բնույթումը կասեցնելու հնարավորությունը: Մենք փորձեցինք այդ տեղեկությունը նշուել Հայ ազգային կոնգրեսի իրավական հանձնաժողովի ղեկավար Գագիկ Ջահանգիրյանից: Վերջինս մեզ հետ գրույցում ասաց, թե ինքը նման տեղեկության չի տիրապետում, եւ որեւէ մեկը, իր իմանալով, նման հարց չի բարձրացրել: Փորձեցինք նշուել նաեւ նախկին քաղաքատարկայներից: Նրանցից մեկը՝ «Մարտի 1»-ի գործով դատադատված եւ 2009-ին ՀՀ ԱԺ որոշման հիման վրա համաձայնեցինք ազատ արձակված Սուրեն Սիրունյանը, մեզ հետ գրույցում ասաց, թե ինքը տեղյակ է դրանից, բայց այդ մասին կխոսի առաջիկա օրերին: Իսկ առայժմ նա, իր ասելով, սղասում է իր փաստաբան Վարդուհի Էթալյանի վերադարձին, որն այս օրերին Հայաստանում չէ:

ՍՈՒՐՅԱՆԴԱԿ

Ի՞նչն է համադարձան ընդդիմության համար

«Իսկ եթե հարյուր տոկոսանոց համամասնական ընտրությունները համադարձան են ոճանց համար, աղա այդ հարցը վեց ամիս առաջ թող կտրուկ դրվեր, ինչն՝ չարվեց: Միայն մեկ օրինակ երկայացնեն՝ 1990-ի ԳԽ ընտրությունները համարվում են լավագույն ընտրությունները, որոնք, ի դեպ, անցել են հենց մեծամասնական ընտրակարգով: Մենք այս տարիներին գնացել ենք համամասնական տեղերի ավելացման եւ մեծամասնականի փոքրացման՝ հաշվի առնելով նաեւ քաղաքական դաշտի կայացման խնդիրը, եւ եկել-հասել ենք այս հանգրվանին: Ընտրությունների անցկացման արդարության խնդիրը կախված չէ ընտրական համակարգի տեսակից: Այո, արդար ընտրությունների անցկացման խնդիրը արդիական է, եւ մենք դա ընդունում ենք եւ այս հարցում դատարաս ենք լսել եւ համագործակցել բոլորի հետ»,- «Առավոտի» հետ բացառիկ հարցազրույցում ասաց ԱԺ նախագահ Սամվել Լիկոյանը:

Կարդացեք էջ 3:

ՀՀԿ-ն կզնա մեճակ

Հանրապետական կուսակցությունն արդեն կայացրել է գալիք խորհրդարանական ընտրություն-ներին մասնակցության ձեւի մասին իր որոշումը: Այս մասին է ասել է ՀՀԿ շտաբին մոտ կանգ-նած աղբյուրը, որի տվյալներով՝ «դրոճեփոխակ սոցիոլոգիական հարցումների արդյունքները վկա-յում են այն մասին, որ կուսակցության քաղաքական վարկանիշը շարունակաբար աճում է՝ այլ հիմնական ուժերի վարկանիշի կայուն նվազման Ֆոնի վրա»: Այս դրամաներում Հանրապետ-ական կուսակցությունը որոշել է միայնակ հասնել բացարձակ հաղթանակի համամասնական ընտրադաշտում եւ դաշտում բոլոր մեծամասնական տեղերի համար, ասել է աղբյուրը:

Քաղաքական քարոզչություն չէ՞

Որբերտ Բոչարյանի ոչ ղաշտոնական 2nd.am կայքում այսուհետեւ իրադարձվելու են նա-եւ քաղաքական վերլուծություններ: Կայքի խմբագիր Արսեն Սահակյանը թեւեւ չի մխտում, որ այդ փոփոխությունը դաշնակալի վրա է նախընտրական գործընթացներով, այնուամենայնիվ, դա քաղաքական քարոզչություն չի համարում. «Չեմ կարծում, թե քարոզչության նղատակ հետադարձվելու երկրորդ նախագահը մեր հույսին կնճա», - «Առավոտի» հետ գրույցում նշեց դա-րոն Սահակյանը:

Կարդացեք նաեւ էջ 4:

ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

Ասուլիս

Այսօր, ժամը 12-ին, «Փաստարկ» մամուլի ակումբի հյուրն է ԱԺ դատազանավոր Մկրտիչ Սինասյանը:

Եղանակ

Երեւան -6 +4,
Շիրակ -14 -1,
Կոտայք -12 0,
Գեղարքունիք -14 0,
Լոռի -8 +2,
Տավուշ -7 +7,
Արագածոտն լեռներ -12 -2,
Արագածոտն նախալեռ -6 +4,
Արարատ -6 +4,
Արմավիր -6 +4,
Վայոց Ձոր լեռներ -12 +2,
Վայոց Ձոր նախալեռ -5 +7,
Սյունիքի հովիտներ -5 +8,
Սյունիքի նախալեռներ -7 +2,
Արցախ -3 +7

«Ընդդիմությունն ուշացել է անգամ լավագույն սցենարի դեմքում»

Աժ Գալստյանի Սամվել Նիկոյանի հարցազրույցը



- Ընդդիմադիր քաղաքական ուժերը բավականին ակտիվորեն դասակարգվում են մեծամասնական ընտրական համակարգի վերացում և հարյուր տոկոսանոց համամասնական ընտրակարգի անցում: Որոշեց Աժ Գալստյանի ինչպե՞ս եք վերաբերվում ընդդիմության առաջարկին, հնարավոր է՞ վերջին տարիներին հանկարծ փոփոխվել «Ընտրական օրենսգրքը»:

- Բավականին հետաքրքիր քննարկումներ գնացել են ևս ուշադիր հետևում էի այս քննարկումներին: Սակայն ինչի՞ շուրջ են այս քննարկումները: Ես փորձեցի սղասել բոլոր հնարավոր եւ անհնարին հիմնավորումներին, լսել բոլոր կարծիքները: Ըստ տվյալների միայն մեկ հիմնավորում, այն է՝ եթե ուզում եք արդար ընտրություններ, ապա դեպք է անցնել համամասնական ընտրակարգի: Բայց եթե ուզում եք անդրադառնալ ընտրական համակարգին, ապա ինչո՞ւ եք անտեսում երկրի դեմոկրատիկ կառուցվածքը: Ինչպե՞ս երկիր է մերը՝ Գալստյանի կողմից, կիսանախագահական, թե՞ դեմոկրատիկ: Ցավով, ոչ մեկը այս քննարկումների ընթացքում չի էլ փորձել ինքն իրեն ներդրություն տալ եւ ինչ էլ որ մեր երկրի խորհրդարանը միապալատականի է եւ ոչ՝ երկպալատականի, եւ սրանով իսկ կանխորոշված է որոշ խնդիրների լուծումը: Եկեք միասին նայենք, թե ինչ է կատարվում աշխարհի այլ երկրներում: Ուսումնասիրելով 119 միապալատ եւ մոտ 70 երկպալատ խորհրդարաններ՝ նկատելի է, որ 119 միապալատ խորհրդարաններից [որոնք, ըստ տվյալների, մնաց 44-ում՝ գործում է մեծամասնական, 45-ում՝ համամասնական եւ 25-ում՝ խառը ընտրական համակարգեր: Այսինքն՝ ստացվում է, որ միապալատի մոտ 69 երկրներում գործում է կամ մեծամասնական, կամ խառը ընտրական համակարգը: Սա նշանակում է, որ աշխարհում դեռևս գերակշռում է, գործում է եւ գործելու իրավունք ունի մեծամասնական կամ խառը ընտրակարգը: Եթե այս թվերից առանձնահատուկ եւ միայն Եվրոպայի օրինակով նայենք այս խնդրին, ապա այստեղ եւս մեծամասնական ընտրական համակարգը դեռևս գործում է: Միապալատ խորհրդարան ունեցող շատ երկրներում գործում է խառը համակարգը եւ համամասնականը, եւ մեծամասնականը: Այսպիսի

երկրներ են Ուկրաինան, Լիտվան, Գերմանիան, Բուլղարիան, Կրաստանը, Գերմանիան եւ այլն: Սա նշանակում է, որ Եվրոպայում եւս միապալատականի դեմքում ընտրական համակարգը: Մյուս կողմից էլ՝ շատ երկրներում երկպալատ խորհրդարան ունենալով հանդերձ՝ գործում են խառը ընտրական համակարգեր, օրինակ՝ Գերմանիայում, Իտալիայում, Ռումինիայում, Ֆրանսիայում եւ այլն: Այս բոլոր օրինակները ներկայացնելու նպատակով մեկն է՝ բացատրել մեր ընդդիմադիր գործընկերներին, որ ամբողջ աշխարհում լայն տարածում ունեն եւ մեծամասնական, եւ համամասնական ընտրակարգերը: Կարծում եմ՝ Գ-ի համար չափազանց մեծ շրայություն կլինի անցնել երկպալատականի համակարգի, իսկ մերի մեծ միապալատականի համակարգերում խառը ընտրական համակարգերի միաձուլման նպատակով մեկն է՝ որդեգրել ինչի էլ կուսակցական ընտրություն, եւ դեմոկրատիկ տարածքային ներկայացվածություն: Սա արդարացված է, գործում է, մենք երկրի բոլոր տարածաշրջաններից ներկայացուցչներ ունենք խորհրդարանում, որոնք իրենց տարածքի կոնկրետ խնդիրներն են բարձրացնում: Ուստի այսօր տեղին չէ խոսել մեծամասնական ընտրական համակարգի ավելորդության մասին: Կարծում եմ՝ այդ մասին խոսելն է ավելորդություն: Իսկ եթե մեր գործընկերները մտախոհություն ունեն ընտրությունների արդար եւ թափանցիկ անցկացման համար, ապա հենց այդպես էլ դեպք է ասեն, մասնավոր՝ այդ մասին առաջինը եւ բավականին հստակ խոսել է հենց ինքը՝ իշխանությունը, երկրի Գալստյանից: Իշխանությունն ասել է, որ բոլոր լծակները կաշխատեցնի, գործում մեխանիզմներ կկիրառի արդար եւ թափանցիկ ընտրությունների համար: Եկեք այս մասին խոսենք. սա մենք դատարար ենք քննարկել:

այդ մասին չեն խոսում:
- Քանի որ, ընդհանուր առմամբ, այս ընտրական համակարգերի շուրջ քննարկումները, իմ կարծիքով, բացառապես քարոզչական բնույթ են կրում, ապա բոլոր այն կուսակցությունները մի կողմից՝ խոսում են հարյուր տոկոսանոց համամասնականի մասին, բայց արդեն Գալստյանի արդարություն են նաեւ մեծամասնականի, ուրեմն դա եւս իրենց կողմից ընդամենը քարոզչական բնույթ է կրում եւ ոչ ավելին:
- Ամեն դեպքում՝ հարցը ընդդիմադիր խմբակցություններին արդեն դրել են շրջանառության մեջ, ինչպե՞ս է այն ընդունվելու մեծամասնության կողմից:
- Իմ կողմից հարգված գործընկերներն այդ հարցի մասին խոսել սկսել են դեռևս դեկտեմբերին, սակայն Գալստյանից ներկայացրել են հունվարին: Եթե մենք հաշվարկում ենք Աժ Կանոնակարգ-օրենքի համադասարանական ժամանակացույցով, ապա անգամ դրական մոտեցում ցուցաբերելու դեպքում հարցը տեղ չի հասնելու: Այսպես, ես ներկայացնեմ լավագույն սցենարը: Լախագիծը շրջանառության մեջ է դրվել հունվարի 12-ին, հերթական մատչելի օրակարգ ընդգրկելու վերաբերյալ գլխավորապես համաձայնագրվել էր 30-օրյա ժամկետը լրանում է փետրվարի 23-ին: Ենթադրենք, համաձայնագրվելու տալիս է դրական եզրակացություն, ենթադրենք, հարցը մտնում է քառօրյա նիստերի օրակարգ, եւ ենթադրենք՝ Աժ Գալստյանը, ով սահմանում է քննարկվող հարցերի հերթականությունը, բոլոր մնացած կարևոր հարցերը, միջազգային դաշնակցությունները, տնտեսական օրինագրերը եւ այլն, համարում է երկրորդական, իսկ այդ հարցը՝ առաջնային, դնում է քննարկման, եւ ենթադրենք՝ խորհրդարանը սրան հավանություն է տալիս: Դա կլինի փետրվարի վերջին քառօրյայում: Որտեղ հարցի առաջինից երկրորդ ընթացքն են մասնակախատվածը տեսնում է 58 օր, եւ հարցը այսուհետև հաս-

նում է մինչեւ հունիս: Հետո սա դեպք է ներկայացվի Գ-ի Գալստյանի վավերացմանը, հետո տրամաբանորեն տեղեկագրում, հետո մտնի ուժի մեջ: Կատարե՞մ իմ հարգաբան գործընկերները բաշտեցե՞ն Կանոնակարգի այս նորմերին, հետևությունները թողնում են Ձեզ:
- Սակայն մի նոտացեք, որ Աժ ընդդիմադիր խմբակցություններն ունեն հրատառ հարցի իրավունք, եւ չի բացառվում, որ հարցի քննարկումը կդադարանա հենց այդպես, ասե՞նք՝ փետրվարի 6-ին սկսվող քառօրյայում:
- Դա իրենք կարող են անել միայն փետրվարի վերջին քառօրյայում՝ գլխավորապես համաձայնագրվելու եզրակացությունը ստանալուց հետո, եւ ոչ ավելի վաղ: Աժ Կանոնակարգում այդ մասին եւս հստակ է ասված:
- Մամուլը գրեց, որ Աժ Գալստյանի կողմից իբր ինչ-որ շարաշահումներ են իրականացվել, եւ Դուք այդ մասին ասել եք, մնաց բան եղե՞լ է:
- Ես այդ հարցին կուզեմ պատասխանել ճիշտ այնպես, ինչպես դադարեց, ասելով, որ Սամվել Նիկոյանը այդպիսի բան չէր կարող ասած լինել, եւ ես էլ կրկնում եմ այդ բանը՝ ասելով, որ այդ լուրերը բացարձակապես իրականություն չեն համադասարանականում, եւ եթե որտեղ լրագրող ինձ դիմի եւ ասի, թե դադարեց, եւս կարող եմ ինձ հարցնել, ինչպե՞ս է իմ մասին այդ կարգի բաները ասել, եւ կվարվեմ ճիշտ այնպես, ինչպես դադարեց կարող եմ պատասխանել, որ չեն հավատում այդ լուրերին:
- Մի հարց էլ վարչապետի մասով: Ասում են՝ Ձեր եւ վարչապետի Գալստյանը լավ հարաբերություններ վատացել են, սառել կամ մնաց բան:
- Ես ենթադրում եմ, որ այդ թեման դեռ կշահարկվի եւ մինչեւ այս տարվա մայիս ամիսը կնկատվի քննարկման առարկա: Ինձ համար ամբողջությամբ դադար են շարժառիթները եւ թե ինչ խնդիր են դրանով փորձում լուծել: Ուղղակիորեն բոլորից ասե՞մ իմ եւ վարչապետի հարաբերությունները փչացնելու միտված ջանքերն անօգուտ են: Կարծում եմ՝ եւ վարչապետը, եւ ես ունենք բավարար քաղաքական հասունություն, որ այդ կարգի դրոպկացիոն, ստահող լուրերը չկարողանան կարողանալ հետո բացի տեղ չդնենք:
Գրույցը վարեց ՍԱՐԳՍԻՏ ԵՍԱՅԱԼԸ

«Բ Գալստյանը, մոտենում ենք ինչ-որ շրջանի, երբ բոլորին հետաքրքրում են հերթական խորհրդարանական ընտրությունները: Բայց ես մտնում եմ համոզման, որ հնարավոր է հերթական ընտրությունները կանխել: Իհարկե, նաեւ կարծում եմ, որ դեպք է դատարար լինել հերթական ընտրությունների: Իմ կարծիքով՝ բոլոր քաղաքական ուժերի քննարկման առարկան այսօր դա է, բայց ինչ մտնում է ՀԱԿ-ին, ՀԱԿ-ում դա այդքան բուռն քննարկումների առարկա չէ: Չեն բացառում, որ ինչ-որ շրջանակներում շրջափվում է այդ հարցը, բայց եթե մնաց քննարկումներ լինեին, մենք եւս դրանց մեջ կլինեինք»,- «Առավտի» հարցին՝ իրականության հետ աղերսներ ունենալով լուրերը, որ այս օրերին ՀԱԿ-ում բուռն քննարկվում են Գալստյանի ցուցակի եւ մեծամասնական ընտրակարգով ընտրությունների մասնակցողների ցուցակի հարցերը, ասաց ՄԴԳԿ ատենադատ Լյուդմիլա Սարգսյանը: Մեր գրուցակիցը վստահեցնում է, որ ՀԱԿ-ում քննարկվում են ընտրություններին մասնակցության ընդհանուր մարտավարությունը, ընտրակեր-

«Դավիթ Զահնագարյանը չէր հերքել՝ եւ կարող են հերքել»

Լյուդմիլա Սարգսյանը՝ ՀԱԿ-ի ընտրացուցակի մասին

ծիքների եւ ընտրախախտումների դեմ դաշնակցության մեխանիզմները: Ինչ վերաբերում է ընտրացուցակներին, ՄԴԳԿ ատենադատը կարծում է, որ դրա կազմման համար դեռ մեխանիզմներ դեպք է մշակվել, որից հետո միայն այդ հարցը կարող է դառնալ քննարկման օբյեկտ:
Խոսակցություններ են շրջանառվում, որ Կոնգրեսի բավականին կարկառուն դեմքեր հրաժարվում են թե մեծամասնական, թե համամասնական ընտրակարգով առաջարկվել: Ի դեպ, ՀԱԿ կենտրոնական գրասենյակի անդամ Դավիթ Զահնագարյանը իր մասով օրերս 1in.am-ի հարցին ի տատախաճ չէր հերքել այդ լուրը: «Դավիթ Զահնագարյանը ոչ թե չէր հերքել, այլ չէր տատախանել այդ

հարցին, եւ եթե Զահնագարյանը չէր հերքել, կարող են եւս հերքել, որովհետեւ տեղյակ եմ, որ մնաց թեմա չի քննարկվել: Զահնագարյանը այդ հարցը չի շոշափել: Ենթացում եմ որոշ շրջանակներին հուզող հարցեր, իրենք շատ կցանկանան, որ այդպես լինի: Իշխանական հատվածում կան շրջանակներ, որոնք շատ կցանկանային, որ մեզ մոտ ամեն ինչ կարգի չլիներ, բայց դա այդպես չէ: Դեռ շատ լուրեր կոտորվեն, շատ խոսակցություններ կլինեն, բայց երբ կիրառարակվեն ցուցակները, բոլոր մնաց բաներն ի չիք կդադանան: Այսօր մնաց թեմա չկա: Որտեղ մեկը դեռ չգիտի՝ առաջադրվելու է, թե՞ ոչ, կամ մեծամասնականով մասնակցելու է, թե՞ ոչ:

Հետեւաբար չեն կարծում, որ որտեղից մեկ կարողանա այդ մասին կարծիք արտահայտել կամ վաղաժամ որոշում կայացնել»,- ասաց Լյուդմիլա Սարգսյանը: Մեր գրուցակիցը, համեմայնողապես, վստահեցնում է, որ ՀԱԿ-ի Գալստյանի ցուցակից դժգոհներ չեն լինի, քանի որ, իր կարծիքով, այդ ցուցակում մարդիկ կընդգրկվեն իրենց աշխատանքի արդյունավետությամբ:
Քանի որ ՀԱԿ-ում եւս ակնկալում են «50+1» տոկոս մայրեր, հետաքրքրվեցինք՝ իր եւ իր կուսակցության տեղը ՀԱԿ-ի ցուցակում որտե՞ղ է տեսնում ՄԴԳԿ առաջնորդը: Պատասխանը համեստ էր. «Սուտ կլինի ասել, որ մեզ հարցնելու մասին չի մտածել, բայց կարծում եմ, որ յուրաքանչյուրը իր արժանի տեղը կունենա այդ ցուցակում: Վաղաժամ եմ համարում այդ մասին խոսել, քանի որ ցուցակի կազմման տրամաբանությունը դեռ հստակ չէ, վերջնական մեխանիզմներ դեռ չկան: Հետեւաբար որտեղ ճիշտ կհամարեն, որտեղ արժանի կտեսնեն՝ այդտեղ էլ կլինեն»:
ԼԵՆԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Քոչարյանի երկրորդագույններն ակտիվանում են

2nd.am կայքի խմբագիր Արսեն Սահակյանը բնական է համարում, որ Ֆան-կայքերում տեղադրված են Ռոբերտ Քոչարյանի մասին միայն դրական կարծիքներ:



- Պարոն Սահակյան, Ռոբերտ Քոչարյանի ոչ լուրջաբանական 2nd.am կայքից տեղեկացանք, որ առաջիկայում կայքում լինելու են բովանդակային փոփոխություններ: Արդյոք այդ փոփոխությունները դայնամավորված են նախընտրական շրջանի մեկնարկով:

- Ասել, թե մեր հայտարարած բովանդակային փոփոխությունները բացարձակ կադ չունեն այն փաստի հետ, որ տարիք նախընտրական է, կլինեն փարիսեցիություն, բայց Ձեր հարցի ենթատեքստը, թե մենք որտեղ բաց գիտենք երկրորդ նախագահի ծրագրերի մասին եւ այդ համատեքստում ենք առավել օղորտակված աշխատելու, նույնպես ճիշտ չէ: Ընտրությունների փորձը ցույց է տալիս, որ նախընտրական արձույթի եւ ամեն կերպ նշանակալից հասնելու ձգտման մեջ ուղղվում են արժեքներ, մոտացվում դայնամավորված կամ շղայնաձևավորված խաղի կանոններ: Եվ այս ընդհանուր մթնոլորտում համախառն են բնագործությունները փխալ ուղղությամբ պայմանում ու ամարդար թիրախներ ընտրվում:

Ութ ամսվա մեր աշխատանքի ընթացքում մենք դա տեսանք ու գզահնք: Նախընտրական շրջանի մեկնարկով դրանք կշատանան: Այդպես է առաջանում մի կողմից՝ վերլուծականների անհրաժեշտությունը, հարցերից դատարանում տալիս դրանք կշատանան: Այսպես կողմից՝ օղորտակված փոփոխություն տալով՝ անտեղյակ ու անհիմն հրատարակումները կանխելու ձգտումը: Եվ հետո, մեր կայքը գարգացման բնական ընթացքի մեջ է: Եթե առաջ մենք մի քանի ամսվա էինք ստանում կայքի այցելուներից, այսօր դրանք տասնապատվել են: Բացի այդ, նախընտրական շրջանում հակիրճ գրությունից վերածվել են վերլուծական հոդվածների: Նույնը վերաբերում է տեսանյութերին: Եթե առաջ մի հինգ ամսվա կլիմ էինք ստանում, այսօր դրանց թիվը հիսուսի է հասել: Բնականաբար, այս ամենը չի կարող իր արտացոլումը չզգուցել կայքում:

- 2nd.am կայքը ներկայացվում է իբրև Քոչարյանի երկրորդագույնների Ֆան-կայք: Որքանով է տեղի գնան կայքում վերլուծական հոդվածների տեղադրումը, եւ ի՞նչ նշանակալի են դրանք ծառայելու:

- Այս հարցին դատարանում համար ես մեկ անգամ ղեկը ե ճշել կայքի ստեղծման նպատակը: Մենք ասում ենք, որ անկախ համակարգից կամ հակակարգից, անկախ այն բանից՝ կողմ ենք, թե դեմ նրա վերադարձին՝ համաձայն Ռոբերտ Քոչարյանի, գործ ունենք մի ղեկավար գործչի հետ, ով հայոց ղեկավարության մեջ ունեցած ծանրակշիռ ներդրումով դարձել է ղեկավարական կերպար, ով մեր նորագույն ղեկավարության ամենամոտակա ակազա ու հաջողած գործիչներից մեկն է, եթե ոչ միակը: Կայքի ստեղծման նպատակը մեր ղեկավարության ձեռքբերումները եւ դրանց հեղինակին ղեկավարելն է: Եթե այսօր դատարանում վրձվում է ղեկավարական, վերլուծական հոդվածների միջոցով, ուրեմն կոչառականներ այդ ճանապարհով: Թյուր կամ կեղծ ղեկավարները ներկայացնող հոդվածները երկու տեսակ են լինում: Կան այնպիսի հրատարակումներ, որոնց հեղինակները շատ լավ էլ գիտեն, որ կեղծում են, բայց իրենց ստնտուների բաղադրական շահն այդպես է դաժանում: Եվ կան սխալվողներ, ովքեր տեղեկատվության ղեկավար

սի ղեկավարում են վրիպում: Երկու դեպքում էլ արժեք ղեկավարական է իրենց իրենց անուններով կոչելու եւ մարդկանց իրազեկելու նպատակով: Դա խմբագրած կայքը գուտ տեղեկատվական Ֆան-կայք լինելուց անցում է կատարում դեռի քաղաքական քաղաքական հարցերի: Որքանով է Ձեր այդ որոշումը համաձայնեցված ամենամեր Ռոբերտ Քոչարյանի հետ: - Մենք քաղաքական քաղաքականություն չենք իրականացնում: Ի դեպ, կուզեիք, որ քաղաքական քաղաքականություն իրականացնելու նպատակ ունենալիս Ռ. Քոչարյանը նաեւ մեր կայքի հնարավորությունները օգտագործեր, բայց չեն կարծում, թե քաղաքական նպատակ հետադարձելիս երկրորդ նախագահը մեր հույսին կհավան: Ինչ վերաբերում է մեր որոշումը Ռ. Քոչարյանի հետ համաձայնեցված չհամաձայնեցնելուն, ամառը մեկնակցում, ոչ էլ հիմա նման խնդիր չենք ունենցել: - Թեպետ Քոչարյանի գրասենյակի ղեկավարը հայտարարել է, որ կայքը ստեղծվել է բացառապես երկրորդագույնների ջանքերով եւ գրասենյակի մասնակցությամբ

եղել է միայն արխիվային նյութերի տրամադրման մասով, այնուամենայնիվ, շատերի մոտ տեսակետ կա, որ Քոչարյանի գրասենյակի մասնակցությունը շատ ավելի մեծ է:

- Հասկանում են, թե ինչ նկատի ունեք: Այո, գրասենյակի աջակցությունը գնալով մեծացավ, գնալով ավելի շատ եւ ավելի թարմ նյութեր է տրամադրում՝ նկատի ունեն լուսանկարներ, տեսաերկեր, հրատարակումներ: Եթե Ռոբերտ Քոչարյանը որեւէ լրատվամիջոցի հարցազրույց է տալիս, առաջ նրա գրասենյակը այդ հարցազրույցը մեզ էլ է տրամադրում, ինչի համար շնորհակալ ենք: Բացի այդ, մարդիկ համախառն չեն գտնում եւ մեզ հետ կադ են կարողանում հաստատել երկրորդ նախագահի գրասենյակի միջոցով: Այդքանով կարող գրասենյակի հետ ավարտվում է: Ձեր ակնարկած ավելի մեծ օժանդակությունը չկա եւ չի եղել:

- Իսկ ո՞րն է ղեկավարը, որ կայքում ներկայացված են Քոչարյանի մասին բացառապես դրական կարծիքները, այն դեպքում, երբ ակնհայտ է, որ բացասական կարծիքները ես, մեղմ ասած, քիչ չեն:

- Նախ ասեմ, որ բացասական կարծիքները շատ փոքր թիվ են կազմում դրական կարծիքների համեմատությամբ: Այս ընթացքում մեր հարցերից դատարանում էլ է ավելի քան հազար մարդ: Նրանցից 812-ը, այսինքն՝ հարցվածների շուրջ 81 տոկոսը, կողմ են մեծ քաղաքականություն Ռոբերտ Քոչարյանի վերադարձին, 754-ը, այսինքն՝ 75 տոկոսը, ոչ միայն կողմ են, այլեւ կոչ են անում անողայման վերադառնալ եւ կրկին ղեկավարականություն ստանձնել երկրի ղեկավարի համար, իսկ հարցվածների մոտավորապես 65 տոկոսը, այսինքն՝ 654 մարդ, միայն Ռոբերտ Քոչարյանի հետ է կադում

Վտանգավոր խաղալիքներ

Խաղալիք բջջային հեռախոսները, մասնավորապես հեռուստացնողիկի տեսքով կամ «Ming sheng» անվանումով, վտանգավոր են երեխաների համար: Այս մասին տեղեկացնում է Եվրոմիկայի նախարարության շուկայի եւ ստանդարտների շահերի վերահսկողության տեսչության կայքը՝ www.prosafe.am:

Ըստ նրանց, վտանգավոր են համարվում նաեւ «Secret Rider» խաղալիք «Ոստիկանը», «Candy» դիմախաղարձան փայտեղ, «Mars hero» խաղալիք էլեկտրաշուկ, «Tip top» ֆլոմաստերները, «Paradiso sun»:

Ձուր չեն ունենա

«Երեւան Ձուր» ընկերությունը տեղեկացնում է իր հաճախորդներին եւ ստանդարտներից, որ, վերանորոգման աշխատանքների հետ կադված, ս.թ. հունվարի 17-ին, ժամը 10.00-20.00-ը կդադարեցվի Աջափնյա վարչական շրջանի՝ Լուկաշին թաղամասի, Չուխաջյան, Թերեմեզյան, Գր. Զոհրատ, Միրաբյան, Մելիքյան փողոցների, Հասարակայնության 25/4 շենքի եւ հարակից տարածքների ջրամատակարարումը:

Ընկերությունը հայցում է ստանդարտների ներդրումները՝ ղեկավարված անհանգստության համար եւ կանխավ շնորհակալություն հայտնում ըմբռնման համար:

«Երեւան Ձուր» ՓԲԸ

«Արզնի 2 Երեւան» ջրամատակարարումը վերսկսվել է



Ինչպես արդեն տեղեկացրել էր «Երեւան Ձուր» ընկերությունը, «Արզնի 2-Երեւան» ջրատարի շինարարական աշխատանքների հետ կադված՝ հունվարի 16-ին, ժամը 10.00-ից մինչեւ հունվարի 17-ը, ժամը 10.00-ը նախատեսվում էր դադարեցնել հետեւյալ տարածքների ջրամատակարարումը:

- 1. Արաբկիր վարչական շրջանում՝ Սեւարեցի Սար, Արդույան, Գրիբոյեդով, Գ. Արծրունի, Ղափանցյան, Մալխասյան, Ն. Զարյան, Զ. Քոչար, Վ. Վաղարշյան, Մանուշյան, Զ. Էմին, Թավրիզյան, Բաքու, Կովկասյան, Վ. Փափազյան, Ռիզայի, Գյուլբենկյան, Կոմիտաս, Ա. Խաչատրյան, Բակունց փողոցների,
- 2. Ծեմգավիթ վարչական շրջանում՝ Բագրատունյաց 4, 6, 7, 8, 10, 11/1, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 24, 26, 27, 28, 29, 30, 31, 35, 36, 37, 38, 40, Բագրատունյաց 2-

- 48, 49/19, 51/16, 51/17, 53, 55, 57/12, Չելսոկ 24, 25, 28, 32, 34 շենքերի 3-ից բարձր հարկերի: Իսկ Ղափաջյան, Արազածի, Կողբի փողոցների առանձնատներում նկատվելու էր ջրամատակարարման ճնշման անկում:
- Սակայն ինչպես տեղեկացրեց «Խնելու ջրի արտադրության եւ փոխադրման վարչության» ղեկավար Գրաբյանը, ձեռնարկված միջոցների շնորհիվ հնարավոր դարձավ «Արզնի 2 Երեւան» ջրատարի վրա առկա տեխնիկական խնդիրները լուծել նախատեսվածից շուտ: Ներկայումս ջրատարի շահագործումը վերսկսվել է, եւ առաջիկա ժամերին կվերականգնվի ընդամենը տարածքների բնակիչների ջրամատակարարման ժամանակացույցը:

«Երեւան Ձուր» ՓԲԸ
Հաղորդակցության բաժին

«Մասնավոր խուզարկուի» ճանաչել է Սերժ Սարգսյանը

Կենտրոնն եւ Լորթ-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գագիկ Պողոսյանը ավարտեց իր վարչություն գտնվող մասնավոր խուզարկուի գործունեությանը զբաղվող վաղիմիր Թուրաբյանի դեմ հարուցված քրեական գործի դատաքննությունը: «Մասնավոր խուզարկու» վաղիմիր Թուրաբյանը դատադատվեց 1 ամսվա կալանքի:



Թուրաբյանը իր դատավեճը բողոքարկելու է վերաքննիչ դատարանում:

Այդ կադրային շրջանում որոշեցինք ճշտել Վ. Թուրաբյանի դիրքորոշումը: Մինչ Զայաստանի միակ մասնավոր խուզարկու իրեն համարող Վ. Թուրաբյանին հանդիպելը՝ որոշեցինք նրա մասին տեղեկանալ մեր «խուզարկուական» աղբյուրներից (լրագրողի եւ մասնավոր խուզարկուի տարբերությունը այն է, որ լրագրողը իր ձեռքի տակ ունեցած տեղեկությունները հրատարակում է օրենքի շրջանակներում, իսկ Զայաստանում «Մասնավոր խուզարկուների մասին» օրենք չկա՝ Ռ. Մ.):

Վ. Թուրաբյանը, ի դեմք, մեր գրույցի ժամանակ հաստատեց մեր մի քանի տեղեկությունները: Պարզվեց՝ Վ. Թուրաբյանը 20 տարի աշխատել է Զայաստանի ազգային անվտանգության ծառայության կադրերի վարչության ղեկավար տեղակալ: Նա աշխատանքից ազատվել է այն ժամանակվա տնօրենի՝ Սերժ Սարգսյանի հրամանով: Վ. Թուրաբյանը սկսել է զբաղվել «Մասնավոր խուզարկուի» գործունեությամբ, ինչի կադրային շրջանը դատադատվել է: Նրա երազանքն է Զայաստանում հավաքել մոլորֆեսիոնալներից, զբաղվել մասնավոր խուզարկուի

գործունեությամբ: Դատվածության ժամանակ, երբ 2008թ. առգրավվել են նրա բնակարանում եղած փաստաթղթերը, դրանց մեջ դեռ եղել են անցյալ տարի մանկադրության համար 15 տարվա ազատազրկման դատադատված Սերժ Սեր-Բողոսյանի մասին տեղեկություններ:

Վաղիմիր Թուրաբյանը դատարանում ուներ թարգման: Նրա շահերը ներկայացնում էր հանրային թաշտույան Վարդան Գրիգորյանը:

Թուրաբյանը մեղադրվում էր Ս. Մ.-ի անունով՝ Ս. Մ.-ի սիրային կադրերը բացահայտելու, Ա. Ա.-ի թաղանթում Վ. Ա.-ին ծայնագրելու եւ գաղտնի լուսանկարելու, Լ. Գ.-ի թաղանթում 20 000 դրամի դիմաց զինվորական կոմսարիստի Գ. Ա.-ի վերաբերյալ տեղե-

կություններ հավաքելու համար:

Վ. Թուրաբյանը համաձայն չէ, թե ինքը անձնական եւ ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկություններ է հավաքել: «Զինկոմսարիատից հաշվառման մեջ գտնվողի մասին տեղեկանալը ինչ ընտանեկան գաղտնիք է: Որտեղ է սահմանված, թե շոգեբաղնիքում տվյալ ժամին գտնվողի անունը ճշտելը անձնական գաղտնիք է», - հարցնում է նա:

«Իմ թաշտույան իր ո՞ր գործողություններով է բացահայտել ընտանեկան գաղտնիք պարունակող տեղեկություններ, որոնք այդ անձինք փորձել են թաքցնել հանրությանից, եւ իմ թաշտույանյալի փնտրտուքի հետեանքով է, որ դրանք բացահայտվել են: Յուրաքանչյուր դեմքում էլ իմ թաշտույանյալը

տեղեկացել է այնպիսի գործողությունների մասին, որոնք բաց են եղել հասարակության համար», - դատարանում իր թաշտույանական ճանաչելու մասին ասաց թաշտույան Վ. Գրիգորյանը:

«Անձնական գաղտնիք» է համարվել նաեւ այն, որ Վ. Թուրաբյանը տեղեկացել է իրեն դիմած մի կնոջ՝ Ա. Ա.-ին խաբած անձնավորության մասին: Պարզվել է, որ «քողմ» աշխատում է բանջարեղենի խանութում, մինչդեռ, կնոջն ասել էր՝ չի աշխատում:

«Անհասկանալի է, թե մեղադրող կողմն ինչու է մեղադրում իմ թաշտույանյալին», - զարմացած է թաշտույանը:

Ի դեմք, դատարան այդպես էլ չենթկայացան մի քանի վկաներ, հետեւաբար հրատարակվեցին նախաքննության ժամանակ նրանց տրված բացատրությունները: Գործը դատարանում գտնվելու ժամանակ, խախտելով «Օղերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքը, գաղտնալսվել են նախկին ԱԱԾ աշխատակցի հետախուսային խոսակցությունները: Հղում է արվել նաեւ օրենքի 62 հոդվածին, որը գոյություն չունի, քանի որ այն ավարտվում է 42 հոդվածով՝ օրենքի ուժի մեջ մտնելու վերաբերյալ դրույթով:

Վ. Թուրաբյանը, մինչ իր հետ կշվիվեց, գիտի ով է «ինչ է շնչում», «ու՜մ միջոցով է շնչում»: Լրագրողս, դատավորը եւ մնացյալները «շնչավորներից» մեկն էին:

ՌՈՒԳԱՆ ՄԻՆԱՅԱՆ

Երբ գործող ավագանին չեղածի հաշիվ է

Ինչու են տաղալվում Լուսամորում իրականացվող ծրագրերը եւ Գերդրումները դառնում անարդյունավետ

«Առավոտը» գրել է, որ Տավուշի մարզի Լուսամոր գյուղում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի եւ այլ կազմակերպությունների ֆինանսավորմամբ իրականացված ծրագրերն ու կատարված մեծ Գերդրումներն անարդյունավետ են եղել. 83 միլիոն դրամով կառուցվել է խմելու ջրագիծ, 6 կմ երկաթուղիներ են կառուցվել, սակայն մի քանի տեղ ջրագծի վթարներ կան, ինչի հետեանքով փոքր գյուղի կենը՝ շուրջ 80 ընտանիք, ներկայումս չի կարողանում օգտվել այդ ջրագծից: Կամ՝ 21 միլիոն դրամով վերանորոգվել է մշակույթի տունը, բայց այսօր դահլիճի առաստաղը ջրի արտահոսքից վնասվել է եւ այլև՝ <http://www.aravot.am/2012/01/12/25862/>:



Մեր հրատարակումից հետո Լուսամոր են այցելել ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ներկայացուցիչները, որոնք ստանալով իրավիճակի մաս կարեւոր է: Սակայն կարեւոր է նաեւ հենց տեղի՝ գյուղի բնակիչների հասարակական վերահսկողությունը: Լուսամորում ծրագրերի անարդյունավետության դատաճանաչումը մեկն էլ համայնքի կողմից վերահսկողության թաղանթն է: Համայնքի վերահսկողության գործառույթ ունի ավագանին: Լուսամորում ավագանու 4 անդամ կա, որից Ռոման Նազարյանն անցյալ տարվա զարգանը տեղափոխվել է Ռուսաստան: Ավագանու անդամներից Էդիկ Մխիթարյանն էլ 2011 թվականի դեկտեմբերի 21-ին գյուղապետից դիմում է տվել իր հաճախականի մասին: Մեզ հետ հետախուսագրույցում Էդիկն ասաց, որ առաջիկա փետրվարին տեղական ժամանակով գնալու է Ռուսաստան՝ իր զավակների մոտ:

Ավագանու անդամ Սոֆյա Այվազյանը դժգոհ է Լուսամորի գյուղապետ Սուրեն Քոչարյանից այն բանի համար, որ գյուղապետը սխալ տեղեկանք է տվել այն մասին, թե Սոֆյայի հարեան Կարո Այվազյանը նախկինում անօրինական չի շահագործել իրեն թաղանթող մեքենան: Հարեաններ, սակայն ազգակցական կապ չունեցող Սոֆյա եւ Կարո Այվազյանների հարաբերությունները տարիներ շարունակ լարված են: Սոֆյան տարբեր ատյանների ուղղված դիմումներում բողոքել է, որ Կարո Այվազյանը 2011 թվականի ամռանը անօրինական կերպով, առանց

դատարանի որոշման արտադրության եւ տեխնիկական զննության, առանց տեսահամարանի շահագործել է իր «Գագիկ» ավտոմեքենան: Սոֆյան մտադիր է բողոքը հանել գյուղի սահմաններից՝ հանդիպել Տավուշի մարզպետ Արմեն Դուրաբյանին եւ նրան հանձնել ավագանու անդամությունից հրաժարականի իր դիմումը: Դրանով 213 տուն, 697 բնակիչ ունեցող Լուսամոր համայնքի ավագանին կհամարվի մեկ անդամով եւ չի կարող նիստեր գումարել:

ՌՍԿԱՆ ՍԱՐԳՅԱՆ

Կենսաթոշակների յուրացում չի՞ եղել

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում, դատավոր Մուշեղ Զարությունյանի նախագահությամբ, ընթացում է շարունակաբար, միասնական դիտավորությանը կենսաթոշակառուների գումարները յուրացնելու, առեւտրային կաշառք ստանալու եւ թաշտույանական փաստաթղթեր կեղծելու եւ օգտագործելու մեջ մեղադրվող վանաձորի Ծղղիկ Վարդումյանի դատաքննությունը:

Տուժող Ձեմֆիրա Մաթեոսյանի նախաքննական ցուցմունքի համաձայն՝ իր ՌԴ-ում գտնվելու ժամանակ Ծղղիկ Վարդումյանը, առանց իրեն տեղյակ դառնելու, ստորագրել ու ստացել է 2010 թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսների իր կենսաթոշակը՝ 61.908 ՀՀ դրամ:

Վկա Սուսաննա Մաթեոսյանի նախաքննական ցուցմունքից թաղանթներ է, որ Ծղղիկ Վարդումյանը չի վճարել մոր թոշակն ու հանձնել իրեն: «Ես աշխատանքից ազատվել եմ ոչ թե այս մարդկանց գումարները չվճարելու, այլ առողջական խնդիրներ ունենալու դատաճանաչումով»:

«Ես աշխատանքից ազատվել եմ ոչ թե այս մարդկանց գումարները չվճարելու, այլ առողջական խնդիրներ ունենալու դատաճանաչումով»,- դատարանում հայտարարեց «Հայփոստ» ՓԲ ընկերության Վանաձորի փոստային բաժանմունքի նախկին ղեկավար Ծղղիկ Վարդումյանը՝ ավելացնելով, որ ինքը կենսաթոշակառուների գումարները ստանալու ժամանակ շահադիտական նպատակներ չի ունեցել: «Ես իմ համար չեմ արել», - ասում է Վարդումյանը:

Տուժող Նատաշա Մանուկյանի ցուցմունքի համաձայն՝ 2008 թվականի սեպտեմբերի 13-ին մեկնել է ՌԴ եւ խնդրել Ծղղիկ Վարդումյանին իր մեկ ամսվա թոշակը ստանալ ու տալ հարեանին, իսկ հաջորդ ամիսներից՝ չստանալ: «Վերադարձա եւ տեղեկացա, որ Ծղղիկ Վարդումյանը, առանց ինձ տեղյակ դառնելու, ստորագրել ու ստացել է 2008-ի հոկտեմբերից օգոստոսը Երասխայի կենսաթոշակը», - նշված է նախաքննական ցուցմունքում: Ծղղիկ Վարդումյանի թաշտույան Գուրգեն Զարությունյանը կարծում է, որ գործի բազմակողմանի քննության համար անհրաժեշտ է բերման որոշում կայացնել այն տուժողների ու վկաների հանդեպ, ովքեր դատարանում մինչ օրս ցուցմունք չեն տվել, ավելին՝ Ծղղիկ Վարդումյանը գրկված է եղել նրանց մեծ մասի հետ առեւտրային հարցաքննվելու իրավունքից:

«Սարթուլի գործ է: Յուրաքանչյուր մասին որեւէ խոսք լինել չի կարող: Յուրացումը կատարվում է ուղղակի դիտավորությանը, երբ մարդը տնօրինության ու տիրապետության տակ գտնվող գույքը յուրացնում է շահադիտական նպատակով, օտարում է որեւէ կերպ մյուսից ու չի ցանկանում վերադարձնել, նպատակ է չունի վերադարձնելու: Բայց ամբողջ դատաքննության ընթացքում նույնիսկ տուժողները չեն կարողանում թաքցնել այն փաստը, որ իրենք են խնդրել իրենց գումարները դառնել: Իմ թաշտույանյալն էլ երբեք չի հրաժարվել այդ գումարները վերադարձնելուց»:

Պաշտույանն ասում է, որ նախաքննությունը միակողմանի է ընթացել, խախտումներով: Նախաքննական մարմինն էլ քրեական գործ է հարուցել նաեւ այս գործում Երեզրաված տուժողներից 5-6-ի լիազորագրերով, ովքեր երբեք չեն հարցաքննվել: «Անձինք առօրինի մեղադրանք են առաջադրում՝ բաղաբացահարական հարաբերությունների համար: Որ այդպես լինի, ամբողջ Զայաստանը կդատվի: Մարդը բանկից փող է վերցնում, չի կարողանում տալ, եղավ յուրացում», - կասկած է հայտնում թաշտույան Զարությունյանը:

ԱՆՈՒԵ ԲՈՒՆԴԱՐԱՅԱՆ
Վանաձոր

Տեսախցիկները կհետևեն աշակերտներին եւ ուսուցիչներին



Երեսուցի որոշ դպրոցներում տեսախցիկներ են տեղադրված: Ստացվում է, որ ուսուցիչներն ու աշակերտները այլևս հսկողության տակ են: Ա. Շահինյանի անվան Ֆիզմաթ դպրոցի տնօրեն Հակոբ Լավասարյանը դրանում վատ բան չի տեսնում, մանավանդ որ՝ դպրոցի բյուջեից չեն ծախսերը արվել: «Առավոտի» հետ զրույցում ասում է՝ ավարտելու 30-ամյակի առիթով հավաքվել են դպրոցի շրջանավարտները, առաջարկել 1 մլն դրամի սահմաններում ինչ-որ նվեր գնել, տնօրենն էլ չի ցանկացել գումարը վերցնել, հուշել է՝ տեսախցիկներ գնել: «Ես ընդհանրապես դեմ եմ, որ դասասենյակներում տեսախցիկներ դրվեն, իսկ գաղափարը եկավ նրանից, երբ 2006-2007թթ. միասնական քննություններ անցկացվեցին, ու մեր դպրոցն էլ դարձավ քննական կենտրոն: Այդ ժամանակ տեղադրեցին տեսախցիկներ ճաշարանում, որտեղ 100-ից ավելի երեխա էր քննության մասնակցում, հետագայում մտածեցինք մենք էլ այդպիսի բան անենք, շրջանավարտները տեսախցիկներ առան-տեղադրեցին: Այս դեպքում ունենք 8 տեսախցիկ, որոնցից 2-ը տեղադրված են ճաշարանում, որտեղ հիմնականում անցկացնում ենք հանրադատական օլիմպիադաները, մեր դպրոցի ընդունելության քննու-

թյունները»: Ֆիզմաթ դպրոցի տնօրենն ասաց, որ հատկապես իրենց դպրոցի քննությունների ժամանակ ծնողներին չեն թողնում կանգնել դռան մոտ, հրավիրում են իր աշխատասենյակ, մոնիտորով նայելու ողջ դասի վրա: «Ծնողները կարող են տեսնել՝ այնտեղ աղմուկի՞ տրոցես է, թե՞ մարդիկ հանգիստ նստած աշխատում են: Լոպատակը վերահսկողությունն է ու թափանցիկու-

թյունը, ինչը մենք կազմակերպում ենք, կարող ենք առաջնորդել օլիմպիադաների եւ քննությունների ժամանակ»: Հ. Լավասարյանի խոսքով, մի տեսախցիկը մոտոբեռ է հսկում, մյուս 5-ը տարբեր հարկերն ու միջանցքները: Դրա հիմնավորումն էլ ունի. «Երեխաներն այսօր մի քիչ աշխույժ են, հիշտ է, նրանց որակը լավացել է, տաղանդավոր երեխաների թիվը շատացել է, բայց դրա

հետ մեկտեղ այլ խնդիրներ կան՝ փողոցային եւ սերիալական տրամադրությունները, գոեհիկ խոսակցական լեզուն մտել է հեռուստատեսություն եւ բնականաբար՝ նաև դպրոց, իսկ տեսախցիկները ընդամենը հսկելու միջոց են, բայց այնպես չի, որ ամբողջ օրը նստած նայում ենք, թե ով ինչ է անում»: Դ. Դեմիրճյանի անվան թիվ 27 դպրոցի տնօրեն Սուսաննա Սարգսյանը ես ավելորդ չի համարում կրթօջախում տեսախցիկների առկայությունը: Նա այն կարծիքին է, որ տեսախցիկները վերահսկողությունն ուժեղացնելու համար են: Տնօրենը նաև վստահեցնում է, որ դատարանը երբեք, երբ տեսագրությունն օգտագործվել է ինչ-որ խնդիր հարթելու, երեխայի վարքագծի մասին տեղեկություն ստանալու ու կրթած իրը գտնելու համար: Իսկ չե՞նք ներկայում դրանից ուսուցիչները: «Ինչո՞ւ՞ ղեկավար է ներկայում, եթե ուսուցիչն իր աշխատավայրում է եւ իր տեղում, զգուշանալու բան չունի, եւ հետո, այսպես թե այնպես, դասասենյակում 30 երեխայի կողմից վերահսկվում է», - Գեյում է Սարգս-

յանը: Դանիել Վարուժանի անվան թիվ 89 դպրոցի տնօրեն Օֆելյա Պետրոսյանից հետաքրքրվեցինք, ի՞նչ իմաստ ունի տեսախցիկներ տեղադրել դպրոցում, եւ այդպիսի դպրոցի բյուջեին թույլ է տալիս նման շրջապատում գնալ: «Մենք բյուջեով չենք կարող այդպիսի ծախսեր անել, ՀԾԳ-ի եւ հովանավորների միջոցներով ենք տեսախցիկներ տեղադրել», - Եջեց տիկին Պետրոսյանը: Նաեւ ասաց. «Աստված մի արասցե, եթե որեւէ կոնֆլիկտ լինի ուսուցիչի եւ աշակերտի միջեւ, դա էլ կարող ենք տեսագրություններով դարձնել»: Նրա խոսքով, տեսախցիկներ կան իրենց դպրոցում ամենուր՝ մուտքերի մոտ, ելքերի ու ողջ տարածքում: Քաղաքապետարանի կրթության վարչության հանրակրթության վարչության ղեկավար տեղակալ Սիլվա Աշոյանը «Առավոտի» հետ զրույցում ասաց, որ մեկնաբանության խնդիրը կարծես չկա. «Ժամանակակից երեխայի է, ինչո՞ւ չունենանք, եթե դրա հնարավորությունը կա, ոչ ոք չի դատարարել, ոչ ոք չի դատապարտել»: Իսկ դպրոցի բյուջեից է այդ ամենն արվում: «Իհարկե, դպրոցներն ունեն բյուջե, իրենց բյուջեից տնօրինելու իրավունք խորհրդի համաձայնությամբ», - դատարանից ղեկավարը: ԳՐԿՐԱ ԶԱԿՐԵԱՆ

Բերկրանք չստանալ, որ բանակ ունենք՝ Գշտանալու է լինել հիվանդ

Կարծում է ռեժիսոր Արմեն Մազմանյանը



Թատրոնի եւ կինոյի ղեկավար ինստիտուտի ղեկավար Արմեն Մազմանյանի դրոշմաբերությամբ նկարահանված «Ես եմ» ֆիլմը կազմում է ՀՀ բանակի 20-ամյակին նվիրված միջոցառումների փաթեթի մի մասը: Ինչպես երեկ Գա Գշեց լրագրողների հետ հանդիպման ժամանակ, որտեղ «Պոզիտիվ հեթաբաթ» բնորոշվող այս ֆիլմով թեմակիցների հետ ուզեցել են հիշեցնել, որ դաժան փաստերից բացի՝ գոյություն ունեն նաև բացարձակ արժեքների՝ հայրենիք, զինվոր, որին ղեկավար է փայլաբեր: «Հասարակության մեջ տարածված է Եգեատիվիզմը, որի արդյունքում ծնողը չի ուզում երեխային բանակ ուղարկել, իսկ զինվորը չի ուզում ծառայել», - ասաց ղեկավարը: Նա հավելեց, որ ֆիլմի հիմնական «մեսիջն» ուղղված հասարակությանը հետեւյալն է՝ «Սահմանից այս կողմ ես թշնամի չունենմ», «Պետք է զանք այն գիտակցությամբ, որ թշնամիները մեզանից դուրս են, ոչ թե մեր ներսում»: Ա. Մազմանյանը դարձաբանեց ֆիլմի վերնագրի ընտրությունը՝ «Ես եմ» հայրենիքի զինվորը, ես հայ եմ»: Արվեստագետն ընդգծեց այն հանգամանքը, որ մեր ղեկավարությունն այնուամենայնիվ ունենալ բանակ. «Դրանից ազգային բերկրանք չստանալ՝ Գշտանալու է լինել հիվանդ եւ այդ հիվանդությունը տարածել հասարակության մեջ»: Անդրադառնալով բանակի խնդիրներին՝ Ա. Մազմանյանը Գշեց, որ երեխաները «փողոցի ճշտերն» ուսին՝ գնում են բանակ. «Մեր ընտանիքները դադարել են ամեն օր երեխաներին ասել «չի կարելի», որովհետեւ դրա ժամանակը չունենք, դադարել ենք բարեկրթություն սովորեցնել, որ մեծի մոտ չի կարելի «արա»-ով ու «ախշի»-ով խոսել: Ես հոգնել եմ ազգային հիվանդ շարախնդրությունից»: «Ես եմ» ֆիլմն առայժմ տեղադրված չէ համացանցում եւ ցուցադրվում է կինոթատրոններում: Ինչպես Գշեց Արմեն Մազմանյանը, հանդիսատես չի գալիս, եւ դրա դատաճարը փշացած հասարակությունն է. «Ուզում են տեսնել ջակուղիում երկու կիսավազված ոռոս աղջիկ եւ նախկիններով տղա, հետեւաբար՝ մենք խնդիր ունենք հանդիսատես կրթելու»: Ռեժիսորը փաստեց, որ ֆիլմի ցուցադրությունից ի վեր չի լսել դրա վերաբերյալ բացասական կարծիքներ, ավելին՝ տեսել է արցունքն աչքերին հանդիսատես, եւ երբեւէ նրան չեն ասել՝ «ես ի՞նչ դողումս ես արել»: ԼՈՒԻԳԱ ՍՈՒԲԻԱՍՅԱՆ

Տեսաբանի մասնագիտությունը գրավիչ չէ

Թատերական քննադատ Անուշ Ասիբեկյանի դիտարկումները

Թատերական քննադատ Անուշ Ասիբեկյան-Արծրունին թյուր է համարում տարածված այն կարծիքը, թե այսօր թատերագետները զուտ սովորեցնողի դերակատարություն են ստանձնել. «Ռեժիսորներն էլ են հաճախ կրկնում՝ եթե դուք այդքան լավ գիտեք, եկեք ինքներդ էլ բեմադրեք: Արեւմտյան կինոդերոստրիաներում գոյություն ունի ինչպես կինոքննադատի, այնպես էլ սցենարի քննադատի մասնագիտություն: Վերջինս բարձր վարձատրվող մարդ է, ով ֆիլմի նկարահանումների ժամանակ միշտ ռեժիսորի եւ սցենարիստի կողքին է ու նրանց ուղղորդում է, հարկ եղած դեպքում էլ՝ ուղղում է սխալները: Իսկ կինոքննադատի աշխատանքը սկսվում է այն ժամանակ, երբ ֆիլմը դատարան է: Նա չի սովորեցնում, այլ ասում է իր կարծիքը: «Դրսում», ի տարբերություն Հայաստանի, այս տարանջատումը հստակ է, եւ խնդիրներ չեն առաջանում»: Քննադատություն լսելու ու կարծիք արտահայտելու փորձ մեռք բերելու լավագույն հարթակ Անուշ Ասիբեկյանը համարում է «Թատրոն X» հայաստանյան թատերական փառատոնը, որի ժամանակ թատերաքննադատները կարողանում են կարծիք արտահայտել, իսկ բեմադրիչներն էլ առանց խոտվելու՝ դատարանում իրենց ուղղված հարցերին: «Այս փառատոնի արդյունքում տարեցտարի թատերագետներն ավելի հստակ են արտահայտում իրենց կարծիքը, իսկ ռեժիսորներն էլ ավելի հանդուրժող են դառնում քննադատության հանդեպ», - Գշում է նա: Մեր գրուցակիցը փաստում է, որ թատերաքննադատությունն այսօր այնքան էլ գրավիչ մասնագիտություն չէ երիտասարդների համար, սակայն եթե համեմատենք արվեստի մյուս ճյուղերի հետ, կարող ենք ասել, որ թատրոնի քննադատությունն ավելի վատ վիճակում չի գտնվում. «Այսօր արվեստի բոլոր ոլորտներում էլ մույն անխնամ վիճակն է: Մասնավորապես՝ տեսաբանի մասնագիտությունը բարդ է, իսկ մեր օրերում միտում կա դյուրամարսի հետեւից գնալու: Եթե տարիներ անաջ մրցակցություն կար թատերագիտական ֆակուլտետ դիմելիս, այսօր



ոչ միայն մրցակցություն չկա, այլև թափուր տեղեր են մնում: Փոխարենը՝ մեծ է մրցույթը դերասանական ֆակուլտետ ընդունվելու համար, բանի որ, ցավոք սրտի, երիտասարդների գերնդատակը սերիալում խաղալն է»: Անուշ Ասիբեկյանի խոսքով, թատերական մթնոլորտի ստեղծման համար դատարանում է նաև մասնագիտական դարբերականը. «Ամեն դեպքում ես խորհուրդ եմ տալիս երիտասարդ թատերաքննադատներին՝ իրենց հողվածներով թակել բոլոր խմբագրությունների դռները, եւ ո՞վ գիտե, զուցե բախտները բերի ու «անշափ կարեւոր» քաղաքական աղմկահարույց իրադարձությունները առաջին էջերում լուսաբանելուց հետո արվեստին վերաբերող հողվածներին ես մի փոքրիկ սյունակ հատկացվի»: ԹԱՍԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՍՊՈՐՏԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

Դիլիջանի «Իմդուլսը», որ դեկտեմբերի 23-ին արձակուրդից հետո վերադարձել էր մարզումների, հունվարի 15-ին մեկնեց Սոչի՝ ուսումնամարզական հավաքի, որի ընթացքում նախատեսված է անցկացնել 3 ընկերական հանդիպում: Թե որ թիմերի հետ կնքեց դիլիջանցիները՝ դեռ դարձ չէ. մրցակիցները կորոշվեն տեղում: Այս հավաքին թիմի հետ չեն լինի բրազիլացի ու գանացի լեգեոներներ Ջուլիանոն և Իլիասու Ալիասանը: Բրազիլացի ֆուտբոլիստի դարձաբացում արտասահմանյան ակումբ տեղափոխվելու հարցով բանակցությունները դեռ շարունակվում են, իսկ գանացի դաշտում վիզայի հետ կապված խնդիրներ ունի, որոնց կարգավորումից հետո «Իմդուլսը» կմիանա արդեն փետրվարի սկզբներին Կիոտոյում կազմակերպվելիք երկրորդ ուսումնամարզական հավաքի ժամանակ: Այդպիսով, ինչպես հաղորդում է «Իմդուլսի» դաշտում գտնվող կայքը, այս տարվա առաջին հավաքին կմասնակցի 20 ֆուտբոլիստ, այդ թվում նաև բոլորովին վերջերս թիմի խաղացող դարձած 20-ամյա մոլդովացի կիսադաշտում Կոնստանտին Մանդրիչենկոն, որը հայ ֆուտբոլիստերին ծանոթ է «Սիլայում» իր ելույթներով: Մանդրիչենկոն վեցամսյա դաշտում գտնվող տարածքում դիլիջանցիների հետ վարձավճարով հանդես գալու սկզբունքով: Իսկ արդեն Սոչիում թիմին կմիանա ու փորձաշրջան կանցնի սլավոնական «Կոթերի» 19-ամյա եզրային հարձակվող

Մարզային թիմերը Նախատեսված են

Հայկական ֆուտբոլային ակումբներն արդեն ամենայն լրջությամբ դաշտում են գալիք՝ տեղափոխված ամենաերկար մրցաշրջանին, որը մեկնարկելու է առաջիկա մարտին ու կավարտվի 2013 թվականի մայիսին: Այսօր ձեռ կներկայացնեն մարզային մեր երեք ակումբների նախատեսված ծրագրերը:



Ֆիլիպ Տիմոն: Նա Մակեդոնիայի Մ-19-ի կազմում վեց խաղի է մասնակցել ու դարձել է 1 գոլի հեղինակ:

Սոչիում անցկացվող հավաքը նախատեսվում է ավարտել հուն-

վարի 27-ին: Ինչպես նշվեց, փետրվարի սկզբին թիմը կմեկնի Կիոտո, բացի այդ՝ մինչև մարտի 10-ը կանցկացնի ես մեկ հավաք, որից հետո արդեն «Իմդուլսը» կդադարանա մարտի

17-ին կայանալիք «Ուլիս»-«Իմդուլս» գավաթի կիսաեզրափակիչ հանդիպմանը:

Հունվարի 16-ին ուսումնամարզական հավաքի մեկնեց նաև մեր մյուս մարզային թիմը՝ «Գանձասարը»: Միայն թե կառուցվածները մեկնել են ոչ թե արտասահման, այլ Օսթլանդ: Այս հավաքը կավարտվի հունվարի 26-ին, որից հետո ֆուտբոլիստները երկու ազատ օր կունենան, առաջ կմեկնեն արտասահման՝ երկաթաբաշտակի: Բայց թե ուր՝ դեռ դարձ չէ: Հավանաբար, այս անորոշության դադարը թուրքմենբաշի գավաթի խաղարկության շեղյալ համարում էր: Ակումբի ղեկավարները դաշտում հայտարարել էին, որ թիմը կրկին մասնակցելու է այդ մրցաշարին, սակայն օրերս ակումբում տեղեկացել են, որ մրցաշարը չի կայանալու, հետեաբար՝ մասնակցության մասին խոսել էլ անհնար է: Ուստի անհամապատասխան կարգավորումներ կարգվեն: Փոխարենը՝ հստակ են եզրափակվել հավաքի անցկացման վայրը ու ժամանա-

կը՝ մարտի 3-ից 16-ը՝ Անթալիայում: Մինչ այդ էլ՝ փետրվարի 16-ից 28-ը, կառուցվածները կմարզվեն Ֆուտբոլի ակադեմիայում: Նշենք, որ «Գանձասարը» այժմ նոր կոմպլեկտավորման փուլում է. թիմի կազմը նախորդ մրցաշրջանի համեմատ գրեթե կիսով չափ փոխվել է: Եվ ամենակարևորը՝ թիմի հետ այլևս չի կարող լինել վրացի դարձաբացող Լեան Բուրուտեի շվիլին, ինչը լուրջ խնդիր է երկրի առաջնության երրորդ մրցանակակրի համար, որն, այս ամենից բացի, ամռանը մասնակցելու է նաև եվրոպական մրցույթների:

Մեր երրորդ մարզային թիմը՝ «Շիրակը», ես Հայաստանում է անցկացնում ուսումնամարզական հավաքը: Հունվարի 8-ից գյումրեցիները մարզվում են Ավանի ֆուտբոլի ակադեմիայում և միայն փետրվարի 10-ին կմեկնեն արտասահմանյան հավաքի՝ Անթալիա: Սակայն մինչ այդ՝ հունվարի 28-ին, նախատեսված է ստուգողական հանդիպում «Փյունիկի» հետ: Գյումրեցիները ես մեկ հանդիպում են ծրագրել, սակայն մրցակցի հարցում հաստատություն դեռևս չկա: Հայտնի է նաև, որ հունվարի վերջին թիմում փորձաշրջան են անցնելու չորս անփորձ ֆուտբոլիստներ: Արդեն իսկ թիմին միացել է սենյակային հարձակողական ոճի կիսադաշտում, 19-ամյա Իբրահիմ Կանը, որը հունվարի 16-ից սկսել է մարզվել «Շիրակի» հետ: Իսկ թե ովքեր կլինեն թիմն ու ովքեր կմեկնեն կանադական մարզ կլինի հավաքներից հետո:

ԳԱՅԱՆԵ ՆԱԳՐԱՅԱՆ

ԺԱՄԱՆՑ

Վերջերս «Դայան» արվեստի սրահում բացվել է գեղանկարիչ-քանդակագործ Արամ Հունանյանի «Իմ հրեշտակները» խորագրով անհատական ցուցահանդեսը:

«20 տարի է՝ զբաղվում եմ կավիչ քանդակներ փորձարարելով, կավը ավելի շատ ժամանակ է ինձ հետ խոսում, ու չեն կարողանում գեղանկարչությանը զբաղվել: Կավի հետ աշխատելիս չեն զգում՝ ինչու է՞ս քանդակում ամեն ինչ: Երբ դիմում եմ կավին, ես կանգնել չեն կարողանում: Կավը ջրեղնային ունի իր մեջ, մարդկային ջրեղնային, ինչը ամենաթանկն է: Սկզբում կարծում էի, թե արագ աշխատելով արդյունքի կհասնեմ, բայց հիմա հասկացել եմ՝ արդյունքը ինձ բավարարում է միայն այն ժամանակ, երբ երկար ու ճիշտ եմ աշխատում: Կավը վառարանում դեղնում և առաջ մտածում եմ՝ արդյոք որոշ ժամանակ անց այնտեղից դուրս կգա՞ այն, ինչին ստանում եմ, հաճախ արդյունքը անակնկալի է բերում ինձ՝ լինում է ավելի լավ, քան իմ դիմումներս: Երբ տարի զբաղված եմ «Հրեշտակներ» նախագծով, չգիտեմ՝ ինչու եմ անում... Իմ հրեշտակներին նմանեցնում եմ ես հայկական, ես սլավոնական կերպարների, բայց միտումնավոր բան չկա, ստացվում է այն, ինչ զգում եմ, ես չեմ միջամտում, որոնց էլ ինչու է:

Հրեշտակներս թեալոր սուրհանդակներ են

Քանդակագործ Արամ Հունանյանն ասում է, որ կավը մարդկային ջրեղնային ունի

զգում է, այնուհետ էլ ստացվում է», - aravot.am-ի հետ զրույցում ասում է արվեստագետը:

Այնուհետև հավելում է. «Ես երկու



աղջիկ ունեմ, նրանք էլ իմ հրեշտակներն են: Իմ ամենամեծ քննադատները դուստրերս են, մանավանդ փոքրը, նա միշտ դիտողություն է անում. «Պապ, միայն հրեշտակներ մի արա, ուրիշ բան էլ արա, էի... Իմ առաջին ուսուցիչը դադար էր, 7 տարեկանում Կարսից գաղթել է Լեհիստան՝ արվեստների ու արհեստների քաղաք, սովորել է, զբաղվել է քանդակագործությամբ ու փայտե իրեր փորձարարելով: Բոլոր լավ գործիքները դադարեց



վել են ես հասել ինձ, դրանց վրա եմ սովորել ու դադարեցնում եմ մինչ այսօր»:

Արամ Հունանյանը իրեն անաշխատ մարդ է համարում. «Ես շատ անաշխատ եմ ես ինձ հանելի է, երբ իմ գործերով հիանում եմ, բայց ես հաճախ մնում եմ սովորում, ինչ դեմքը չի երևում: 1997թ.-ից մասնակցում եմ խմբակային ցուցահանդեսների, 2010թ.-ին անհատական ցուցահանդես ունեցա Ֆրանսիայում, այնտեղ ինձ ընդունեցին շատ ջերմ, ես չէի ել ստանում, ավելի ջերմ, քան այստեղ: Ֆրանսիացիները ոգեւորված էին, նույնիսկ կազմակերպեցին հայկական երեկո, ավանդական սոլոմայով, որ իմ ձեռքերով էի փայտաթել ես ջերմ ընդունելությունը ինձ անչափ ոգեւորեց»:

Արամ Հունանյանն ասում է, որ 1995թ.-ից իր գնորդները միայն տեղացիներն էին, իսկ ներկայումս՝ միայն արտասահմանցիներ: Արվեստագետն աշխատում է օրական 24 ժամ. «Արվեստագործն լսում եմ դասական երաժշտություն ես մտքիս եկածը հանձնում կավին... Հրեշտակներս էլ թեալոր սուրհանդակներն են, որ շրջում են ամբողջ աշխարհով մեկ»:

ԱՆԺԵԼԱ ՇՄՐՈՒՄՅԱՆ